ՀԱՄԱՏԵՂ ԴԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1972 թ. հունիսի 15-ին և 16-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի փոքր դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ կից արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմների խորհրդի և «Գիտելիք» ընկերության համատեղ գիտական նստաշրջան՝ «ՍՄԿԿ XXIV համագումարը և գաղափարախոսական պայքարի խնդիրները արդի էտապում» թեմայով: Նստաշրջանը նվիրված էր ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին:

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Ծ. Պ. Աղայանը* բացելով նստաշրջանն ասաց, որ ՍՄԿԿ XXIV համագումարը նշանակալի իրադարձություն էր մեր երկրի, մյուս սոցիալիստական երկրների, ամբողջ համաշխարհային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական շարժումների գաղափարական-քաղաքական կյանքում: Ի թիվս այլ հարցերի, ՍՄԿԿ XXIV համագումարը մեծ ուշադրություն դարձրեց նաև գաղափարական պայքարի խնդիրներին: Վերջին տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ցանցում ընտելվել են մի շարք նոր հումանիտար ինստիտուտներ, որով հնարավորություն է ընձեռվել ուժեղացնելու ՍՍՀՄ-ի ու արտասահմանյան երկրների հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմների և համաշխարհային հեղափոխական ընթացքի պատշաճ ուսումնասիրությունը: Ծ. Պ. Աղայանը ընդգծեց նստաշրջանի թեմաների կարևորությունն ու արդիականությունը պատմագիտության հետագա զարգացման համար, խրախուսեց գիտական մի շարք հարցերի քննարկման, մտքերի փոխանակության գործարար հնարավորությունը: Մեր նստաշրջանը,—վերջում ասաց Ծ. Պ. Աղայանը,— տեղի է ունենում այնպիսի ժամանակ, երբ ամբողջ սովետական ժողովուրդը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, լարված և ոգեշնչված աշխատանք է ծավալում ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումները կենսագործելու և ՍՍՀՄ կազմավորման կեսդարյա հոբելյանը նոր հաջողություններով դիմավորելու համար: Այդ ուղղությամբ անհամեմատ մեծ անելիքներ ունենք մենք՝ հումանիտար գիտությունների բնագավառի աշխատողներս:

ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Խ. Հ. Բարսեղյանը* «Գիտական կոմունիզմը և նրա կեղծումը ժամանակակից ռևիզիոնիստների կողմից» զեկուցմամբ փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց տվեց գիտական կոմունիզմի ռենեգատների սնանկությունը, ժամանակակից ռևիզիոնիստների ու տրոցկիստների քայքայիչ գործունեությունը, ընդգծեց նրանց դեմ տղվող պայքարի հրատապ նշանակությունը:

Ժամանակակից ռևիզիոնիստների գործունեության վերլուծությունը ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների լույսի տակ,— ասաց զեկուցողը,— ամենից առաջ բերում է այն եզրակացության, որ գիտական կոմունիզմի ռենեգատները մարքսիզմ-լենինիզմի սկզբունքային հարցերում փաստորեն կանգնած են բուրժուական գաղափարախոսության, հակակոմունիզմի դիրքերի վրա, հրաժարվում են բանվոր դասակարգի հեղափոխական ուսմունքի սկզբունքներից, աշխատավորների շրջանում սերմանում են տրոցկիստական նկրտումներ: Զեկուցողը դատապարտեց ռենեգատներ Ռ. Գարոդիի, Է. Ֆիշերի, Ֆ. Մաուրեկի և այլոց ռևիզիոնիստական տեսությունները, ընդգծեց ռևիզիոնիզմի դեմ պայքարն ուժեղացնելու, նրանց կեղծ տեսությունները մերկացնելու, բուրժուական գաղափարախոսության տարածման ուղիները փակելու անհրաժեշտությունը:

Այնուհետև «Սոցիալիզմի ժամանակ ազգերի սահմանափակ սուվերենության «տեսության» քննադատությունը» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր *Մ. Ա. Մելիքյանը:* Նա ընդգծեց, որ մարքսիզմ-լենինիզմի, սոցիալիստական հասարակության դեմ բուրժուազիայի գաղափարախոսների կատաղի պայքարում նշանակալի տեղ է գրավում սոցիալիզմի պայմաններում ազգերի պետական-քաղաքական վիճակի և նրանց տնտեսական ու մշակութային զարգացման փաստերի կեղծումը: Այդ նպատակին է ծառայում մասնավորապես, այսպես կոչված «սոցիալիզմի ժամանակ ազգերի սահմանափակ սուվերենության» տեսությունը, որն առաջ են քաշել անգլիական և ամերիկյան մի շարք «սովետոլոգ» սոցիոլոգներ (Քոլարդ, Սետոն-Ուոթսոն, Բոլդուին, Լոուն և ուրիշներ: Բացահայտելով այդ «տեսության» սնանկությունը, զեկուցողը նշեց, որ դրա նպատակն է կապիտալիստական աշխարհի առաջ նսեմացնել ՍՍՀՄ-ը՝ այն ներկայացնելով ոչ թե հավասար ազգերի կամավոր դաշինք, այլ բոլոր ազգերը ռուս ազգին ենթարկելու և ձուլելու համակարգ: Պրոֆ. Մ. Մ. Մելիքյանը բազմաթիվ փաստերով ցույց տվեց այն լիակատար սուվերենությունը, որ վայելում են ՍՍՀՄ միութենական հանրապետությունները ոչ միայն պետական, այլև տնտեսական ու մշակութային կյանքում, ինչպես և ՍՍՀ Միության նշանակությունը սովետական բոլոր ազգերի ազատ ու անկաշկանդ զարգացման և նրանց լիակատար սուվերենության ապահովման գործում:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Գ. Ա. Գալոյանը* զեկուցեց «Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման բուրժուական կեղծումների քննադատությունը» թեմայով: Նա նշեց, որ սովետական բազմազգ ժողովրդի կյանքի խոշոր իրադարձության՝ ՍՍՀՄ կազմավորման փառատոնի նախապատրաստությունը, որ անցնում է ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների ու գաղափարների բարերար ներգործությամբ, նոր ուժով է դրսևորում սոցիալիզմի մեծագույն նվաճումներից մեկի՝ լենինյան ազգային քաղաքականության, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության, ինտերնացիոնալ համախմբվածության կենսահաստատությունը: Բընույթով ինտերնացիոնալ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը վերջ տվեց ազգային ճնշմանն ու հարստահարմանը, մեր երկրում արմատապես լուծեց ազգային հարցը, որի հիմքում ընկած է ազգերի ինքնորոշման լենինյան գաղափարը: Անդրֆեդերացիան ժողովրդական մասսաների միասնական կամքի արտահայտություն էր: Բուրժուա-ազգայնամոլական տարրերը ջանում էին օգտագործել առաջացող դժվարությունները, սոցիալ-տնտեսական, քաղաքական հարցերին տալ ազգային գունավորում, խափանել կոմունիստական շինարարությունը: Անդրֆեդերացիան դարձավ ժողովուրդների լենինյան բարեկամության դարբնոց:

Ուշագրավ էր պատմական գիտությունների դոկտոր Գ. Հ. *Սիմոնյանի՝* «Ինդուստրիալ հասարակության տեսության քննադատությունը» զեկուցումը: «Կոնվերգենցիայի տեսության քննադատությունը» զեկուցմամբ հանդես եկավ տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Ն. Ս. Թովմասյանը:* Նա նշեց, որ կոնվերգենցիայի տեսությունը բուրժուական սոցիալիզմի տարբերակներից մեկն է: Նրա ներկայացուցիչները (Ու. Բակինգհեմ, Յաս. Տինբերգեն, Ա. Բեռլի և ուրիշներ) պնդում են, թե հասարակության զարգացման տենդենցը տանում է դեպի Արևելքի սոցիալիստական երկրների և Արևմուտքի երկրների զարգացման օրինաչափությունների տարբերությունների վերացում, նրանց մերձեցում և, ի վերջո, միաձուլում մի նոր «հիբրիդ» տնտեսաձևի մեջ: Այդ նոր տնտեսաձևը, ըստ նրանց քարոզների, ներառելու է ինչպես Արևելքի սոցիալիստական երկրների դրական կողմերը (տնտեսության պլանավորումը, հավասարության սկզբունքը և արտադրության վրա բանվորական հսկողության սահմանում), այնպես էլ Արևմուտքի երկրների դրական կողմերը (մասնավոր սեփականություն, շուկայական հարաբերությունների վրա խարսխված տնտեսական օրենքներ): Իրենց տեսությանը գիտական տեսք տալու նպատակով կոնվերգենցիայի տեսության կողմնակիցները պնդում են, թե Արևելքի և Արևմուտքի երկրների միջև տարբերությունները ներկայումս փոքրանում են՝ ինչպես սեփականության ձևերի, այնպես էլ տնտեսական օրենքների բնույթի առումով: Եթե 30-ական թվականներին Սովետական Միության մեջ գերիշխողը պետական և կոլեկտիվ սեփականությունն էր, իսկ Արևմուտքի երկրներում՝ մասնավոր սեփականատիրությունը, ապա ներկայումս, փորձում են հաստատել նրանք, Արևմուտքի երկրներում պետա-

կան և կոլեկտիվ սեփականատիրությունը նույնպես մեծ չափերի է հասել՝ դրա տակ ունենալով պետական մոնոպոլիստական կապիտալիզմը և բաժնետիրական կապիտալը: Իրականում, մատնանշեց զեկուցողը, սեփականության այդ ձևերը իրենց բնույթով ու բովանդակությամբ կապիտալիստական են և սոցիալիզմի հետ որևէ առնչություն չունեն: Կոնվերգենցիայի տեսաբանները պնդում են, թե Արևմուտքի երկրներում պետական և կոլեկտիվ սեփականության հիման վրա զարգանում է նաև պլանային տնտեսավարությունը, մինչդեռ սոցիալիստական երկրներում գործողության լայն ասպարեզ են ստանում շուկայական հարաբերությունների վրա խարըսխված տնտեսական օրենքները: Այս փաստարկը նս, ինչպես ցույց տվեց զեկուցողը, անհիմն է:

Այսպիսով, եզրակացրեց Ն. Ս. Թովմասյանը, կապիտալիստական և սոցիալիստական երկրները զարգանում են իրենց ներհատուկ օրինաչափություններով և նրանց մերձեցման ու միաձուլման մասին խոսք լինել չի կարող: Անշուշտ, արդի կապիտալիստական երկրներում կստեղծվեն սոցիալիստական կարգեր, բայց ոչ կոնվերգենցիայի տեսաբանների մտացածին սկզբունքներով, այլ՝ սոցիալիստական երկրների զարգացման ճանապարհով:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Ն. Հ. Հովհաննիսյանը* զեկուցեց «Ասիայի և Աֆրիկայի երկրներում սոցիալիստական ուսմունքների մասին» թեմայով: Նա նշեց, որ Ասիայում և Աֆրիկայում ազգային պետությունների կազմավորումից հետո ծագեցին մի շարք նոր պրոբլեմներ, այդ թվում նաև գաղափարախոսության բնագավառում: Վերջին քսանամյակում այդ երկրների համար բնորոշը ոչ մարքսիստական սոցիալիզմի գաղափարների լայն տարածումն է, որն ունի իր պատճառները: Ժողովրդական մասսաները մերժում են զարգացման կապիտալիստական ուղին և սոցիալիզմի մեջ են տեսնում իրենց ազգային վերածնունդը:

Նստաշրջանի եզրափակմանը նախորդեցին փիլիսոփայական գիտությունների թեկնածուներ *Վ. Ա. Պողոսյանի* ու *Ս. Դ. Այվազյանի* զեկուցումները՝ «Սուբյեկտ-օբյեկտի պրոբլեմը Ադորնոյի «տիրապետության տեսության» մեջ» և «Ժամանակակից «սոցիոլոգիական նոմինալիզմի» քննադատության շուրջը» թեմաներով:

Վերջում մտքերի փոխանակության կարգով հանդես եկան *Հ. Գ. Ասլանյանը*, *Ա. Զ. Բեգլանը* և *Շ. Ս. Մարգարյանը*:

Ամփոփելով նստաշրջանի աշխատանքները, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Յա. Ի. Խայիկյանը* նշեց կարդացված զեկուցումների գիտական կարևորությունը, քննարկված հարցերի ու խնդիրների հրատապությունը: Գաղափարական պայքարի խնդիրները հաջողությամբ կատարելու համար,— ընդգծեց նա,— պահանջվում է էլ ավելի բարելավել պրոպագանդայի կազմակերպումը, բարձրացնել գաղափարական տնտեսական աշխատանքների մակարդակը:

Ժ. Մ. ԾԵՐՈՒՆՅԱՆ